

կը հրամայէ հայերուն ընդունիլ Օրթոտոքս կրօնը եւ մկրտուիլ: Հայերը կը մերժեն ուրանալ իրենց պապերուն հաւատքը: Վօտան կը սպառնայ դանոնք ողջ ողջ այրել: Հայերը անգրբորդուելի կը մնան դարձեալ: Այն ատեն Շթէֆան բռնի մերկացնել եւ մկրտել կուտայ, նոյնիսկ ածիլել տալով հայ եպիսկոպոսին, արեղաներուն ու քահանաներուն մօզն ու մօրուքը: Յետոյ ռումէն քահանաներ կը ստորաին հայոց տուները՝ օրհնելու եւ պղծութենէ մաքրելու համար: Շթէֆան Վօտա չբաւականացաւ Սուչովայով՝ զօրք զրկեց նաեւ Հօթին, Սէրաթ, Եաշ, Վասլու, Պօթօչան եւ Ռօման, որպէսզի հոն ալ կողոպտեն հայ եկեղեցիները եւ բռնի մկրտեն ամէն հայ: Պօթօչանցիք խնդրեցին իրենց ժամուն խնայել՝ հազար կարմիր կաշառք խոտտանալով: Մերժեց Վօտան ու փակել տուաւ տաճարը: Ռօմանի մէջ ստիպեցին Պաշտուր քահանան որ Լուսաւորչի կրօնը ուրանայ, եւ երբ քահանան իր հաւատքին մէջ անտասան մնաց, Վօտան հրաման ըրաւ դնչուներուն որպէսզի կապեն անոր ձեռքն ու ոտքերը, եւ երկու աչքերը փորեն: Դարձեալ անգրբորդուելի մնաց քահանան: Այն ատեն բերել տուաւ անոր կիներն ու տղաքը, եւ սպառնաց սուրէ անցընել դանոնք: Մնողական դուժը սկարացուց քահանային յամառութիւնը, ու ստիպուեցաւ մկրտուիլ:

Մինաս Թոխաթցի ի վերջոյ կ'ողբայ թէ ինչպէս Ռումանիոյ մէջ հայ եկեղեցին ենթարկուեցաւ այս ահաւոր պատուհասին, քանդուելով, թալանուելով, իր հոգեւորականներէն զրկուելով, եւ ժամ ու աղօթք զաղբելով:

Մինաս Թոխաթցիի այս պատմութիւնը յերկրուածք մը չէ: Չայն կը հաստատեն նաեւ ռումէն պատմադիրներ: Կրիկօրի Ուրէքէ (Letopistele tarii Moldovei, Ed. I, Tom I, p. 174) կը գրէ Շթէֆան Ռաուչի մասին. «Ժողովրդեան մէջ վատ անուն կրող իր եղբօրը մեղքերը քաւած ըլլալու համար՝ իր երկրին մէջ գտնուող ժողովուրդները, հերետիկոսները ստիպեց որ կամ Օրթոտոքս կրօնը ընդունին, կամ երկրէն հեռանան: Հայերէն ոմանք զիջանեցան, ոմանք կաշառուեցան, ոմանք մկրտուեցան բռնութեան ներքեւ: Շատերն ալ երկրէն մեկնեցան դէպի Թուրքիա, Լեհաստան եւ այ-

լուր, քանզի սերտիւ կապուած էին իրենց կրօնին»:

Ուրիշ ռումէն պատմագիր մը, Նիքօլա Բօսթին կ'ըսէ թէ «յոյժ սխալ ընթացք բռնեց Շթէֆան Վօտա, բռնանալով եւ հալածելով հայերը. ան կը կարծէր թէ այս կերպով իր եղբօրը վատ արարքը քաւած պիտի ըլլայ եւ իր հօր բարի անունը յիշել պիտի տայ վերբասին»:

Գսէնօփօլ ռումէն պատմիչը (Istoria Romanilor, Vol. III, p. 54) մէջ կը բերէ նաեւ օտար ժամանակակիցներու վկայութիւնը: Արդարեւ ժամանակակից լեհ նշանաւոր աստուածաբան եւ հռետոր Օրիքօվիուս, Շթէֆան Ռաուչի մասին գրելով կ'ըսէ. «Արտակարգ էր իր անգլթութիւնը. ամենէն անմեղ մարդոց քիթն ու ականջները կը կտրէր, կը փորէր անոնց աչքերը, կը խոշտանգէր անդամները, եւ անոնց մարմնին ծակտիքներէն հալած կապար կը լեցնէր»:

\* \* \*

Էֆթիմիէ Զիկատէ անուն յոյն աստուածաբան մը 1720-ին Թրկօվիչիթի մէջ կը հրատարակէ Վարդապետական Սպառազիմուքիւն (Panoplia Dogmatica) խորագրով գիրք մը, ուր կը պարսուէ միւս բոլոր դաւանանքները, մանաւանդ քէնով եւ ռիսակալութեամբ կը խօսի հայ եկեղեցւոյ մասին: Այս գիրքը, լեզուն նաեւ զրպարտութիւններով, յետագայ ժամանակներու մէջ փաստ ծառայած է բոլոր անոնց ձեռքը, որոնք ուղած են հայ եկեղեցին նախատել:

Մոլտավիոյ Մետրապօլիտը 1716 Նոյեմբեր 20-ին իր հօտին ուղղած կոնդակով մը նդովքի սպառնալիքով կ'արգելէր Օրթոտոքսներուն հայերուն տունը ծառայութեան մտնել կամ անոնց հետ միեւնոյն յարկի տակ բնակիլ, պատճառաբանելով որ պիղծ արարածներ են հայերը:

Վեհիամին Գօսթաքէ, Մոլտավիոյ եւ Սուչովայի Մետրապօլիտը, հիմնուելով այդ անասպեղներուն վրայ, 1816-ին զրքով մը արգելած է ռումէններուն հայոց հետ յարաբերութիւն հաստատել, անոնց տունը պռակիլ, սեղանակից ըլլալ անոնց հետ, եւայլն: Գօսթաքէի այդ գրութիւնը տեսակ մը կոնդակ էր՝